



Հաստատված է՝

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական  
կենտրոնի խորհրդի 30.05.2013 թ. № 5-Ա որոշմամբ

**«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ»  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԴԻՄՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԳՐԱՎՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
(AMICUS CURIAE)  
№ 05-13-Ա**

ք.Երևան

30.05.2013 թ.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) խորհուրդը, մասնակցությամբ համակարգող Արա Չոհրաբյանի, քարտուղար Իրինա Փիլոյանի, նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Գևորգ Գյոզալյանի, Պալատի ներքին իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գրիգորյանի,

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված «*Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ*» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.<sup>38</sup>-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, տալիս է սույն գրավոր մեկնաբանությունները հետևյալի մասին.

**Հարցի կարևորությունը.**

Սույն սահմանադրական գործով դիմողների կողմից բարձրացված իրավական խնդիրը վերաբերում է նոր հանգամանքով դատական ակտերի վերանայման ինստիտուտին, մասնավորապես՝ նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթի արդյունքում ընդունվելիք դատական ակտի եզրափակիչ մասի բովանդակությանը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով անդրադարձ է կատարել նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթին՝ արտահայտելով մի շարք սկզբունքային իրավական դիրքորոշումներ Հայաստանի Հանրապետության դատավարական օրենսդրությունում (թե՛ քրեական և թե՛ քաղաքացիական) նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի, դրա արդյունավետության ու կենսունակության չափանիշների, ինչպես նաև՝ այդ ինստիտուտի միջոցով անձի սահմանադրական իրավունքների իրացման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների վերաբերյալ <sup>1</sup>:

Կենտրոնն իր 25.04.2013թ. թիվ 03-13-Ա մեկնաբանություններով (եզրակացությամբ) անդրադարձ է կատարել 31.05.2013թ. ՀՀ սահմանադրական դատարանում քննության ենթակա «Քաղաքացիներ Աշոտ Մանուկյանի և Արամ Բարեղամյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.<sup>9</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերով: Ըստ էության, տարբեր սահմանադրական գործերով վիճարկվող իրավադրույթները՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 204.<sup>38</sup>-րդ հոդվածի 2-րդ մասը և 426.<sup>9</sup>-րդ հոդվածի 2-րդ մասը, վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը չփոխելու լիազորության առումով նախատեսում են նույն կարգավորումը:

**Միջամտությունների (մեկնաբանությունների շրջանակը).**

Սույն միջամտության շրջանակում Կենտրոնն անդրադարձ է կատարելու հետևյալ հարցերին՝

ա) Նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի արդյունքում կայացվելիք դատական ակտի եզրափակիչ մասը չփոփոխելու դատարանի լիազորության իրավաչափությունը, որպիսի պայմաններում դատական ակտը չի բեկանվում և մնում է օրինական ուժի մեջ,

բ) Նման իրավակարգավորման պարագայում անձի խախտված

<sup>1</sup> Տե՛ս՝ ՍԴՈ-701, ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-767, ՍԴՈ-833, ՍԴՈ-935, ՍԴՈ-943 որոշումները:

իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության և խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունը:

զ) Նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի առանձնահատկությունների վերաբերյալ միջազգային չափորոշիչներն ու պրակտիկան:

**Վիճարկվող նորմի մեկնաբանությունը.**

1. Սույն գործով վիճարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 204.38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված իրավական նորմերը (այսուհետ՝ Վիճարկվող նորմեր), որոնց համաձայն՝

*«1. Եթե սույն բաժնով նախատեսված չեն հատուկ կանոններ, ապա նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի վրա տարածվում են սույն օրենսգրքի ընդհանուր կանոնները:*

*2. Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 204.32 կամ 204.33 հոդվածով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի էլքի վրա»:*

2. Ուսումնասիրելով սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող դրույթները՝ կարելի է եզրակացնել, որ օրենսդիրը հնարավոր է համարում վերանայման արդյունքում չբեկանել դատական ակտը և օրինական ուժի մեջ թողնել այն: Գտնում ենք, որ նման իրավակարգավորումը կարող է ստեղծել երկու անընդունելի իրավիճակներ՝

➤ Հակասահմանադրական նորմի կիրառությամբ արդարադատության իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելը լուրջ սպառնալիք է իրավունքի գերակայության սկզբունքին:

ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտը վերանայման արդյունքում ուժի մեջ թողնելը չի երաշխավորում դատական ակտերի վերանայման

գործառույթի արդյունավետ իրականացման հնարավորություն՝ արգելափակելով անձի սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը: Տվյալ իրավիճակում չի ապահովվում նաև իրավունքի գերակայության, հետևաբար՝ և Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը:

- Առարկայագուրկ է դառնում դատական ակտերի բացառիկ վերանայման ինստիտուտի միջոցով անձի սահմանադրական իրավունքների վերականգնումը, այն դեպքում, երբ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման վարույթի շրջանակներում իրականացվում է օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի առկայության պայմաններում խախտված իրավունքի վերականգնման գործառույթ:

3. Դատական ակտերի վերանայման ինստիտուտի միջոցով ապահովվում է նախ և առաջ խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը, ինչը պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (*restitutio in integrum*): Հետևաբար, դատական ակտի վերանայման վարույթը՝ որպես անձի խախտված սահմանադրական իրավունքի վերականգնման միջոց, պետք է հանգեցնի իրավունքը խախտած դատական ակտի իրավաբանական ուժի վերացմանը: Արդյունքում հակասահմանադրական ճանաչված նորմատիվ դրույթի կիրառման իրավաբանորեն հավաստված փաստի ուժով պետք է տեղի ունենա վերանայում, իսկ վերանայումը պետք է փաստի ուժով (*ipso facto*) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանմանը:
4. Խնդրո առարկա հարցի վերաբերյալ այս մոտեցումը համահունչ է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից իր մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին, որոնք վերաբերվել են նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի, դրա արդյունավետության ու կենսունակության չափանիշների, այդ ինստիտուտի միջոցով անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրականացման համար անհրաժեշտ

իրավական երաշխիքների ներդրմանը:

5. Այդուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ օրինական ուժի մեջ մտած համապատասխան դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու ծավալը, շրջանակները պայմանավորված են հակասահմանադրական ճանաչված նորմատիվ դրույթի կարգավորման առարկայով, հարաբերությունների բնույթով ու առանձնահատկություններով, կիրառման շրջանակներով և դրանցով պայմանավորված՝ նաև անձի կոնկրետ իրավունքների խախտման փաստով:
6. Այդուհանդերձ, դատական ակտի բեկանման արդյունքում դատարանի կողմից որոշվելիք գործի ելքը պայմանավորված է յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքներով և վերանայումը չի կարող երաշխավորել դատարանի կողմից գործի լուծման այլ՝ նախկինից տարբերվող ելքի ընտրության պարտականություն՝ այնքանով, որքանով դատարանը վերանայման արդյունքում վերացրել է անձի իրավունքների խախտումը:
7. Եվրոպային խորհրդի անդամ պետությունների ճնշող մեծամասնությունը նախատեսում է գործի վերաբացում՝ նոր հանգամանքների ուժով (Դանիա, Ֆինլանդիա, Շվեդիա, Խորվաթիա, Հոլանդիա, Պորտուգալիա, Բոսնիա և այլն): Ընդ որում, մեծ թվով երկրներ որպես նոր հանգամանք դիտարկում են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից վճռի կայացումը:
8. Սույն գրավոր մեկնաբանության շրջանակներում Կենտրոնն ուսումնասիրել է նաև նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի առանձնահատկությունները որոշ պետությունների օրենսդրության շրջանակներում:
9. Լեհաստանի օրենսդրությունը նախատեսում է սահմանադրական դատարանի կողմից որոշման կայացումից հետո անհատական գործի պարտադիր վերաբացում: Ընդ որում, քաղաքացիական դատավարության օրենսդրության համաձայն՝ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական որոշումը ենթակա է

փոփոխման՝ բացառությամբ օրենքով հստակ կանոնակարգված դեպքերի: Նման դեպքեր են, երբ սահմանադրական դատարանի որոշումը վերաբերվում է օրենքի դրույթի մեկնաբանությանը, սահմանադրական դատարանը նեգատիվ նորմաստեղծում է իրականացրել՝ արձանագրելով, որ կարգավորման բացակայությունը հակասում է Սահմանադրությանը, սահմանադրական դատարանի որոշումը վերաբերվում է կառուցվածքային ինստիտուցիոնալ խնդրի, սահմանադրական դատարանի որոշումը վերաբերվում է այնպիսի դրույթի, որը փոփոխության է ենթարկվել որոշման կայացումից հետո:

10. Չեխիայի օրենսդրությունը նախատեսում է գործի վերաբացում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից վճիռ կայացնելու դեպքում: Այնուամենայնիվ, ներպետական դատարանի կողմից կայացվելիք որոշման համար դրանք չունեն ուղղակի ազդեցություն: Օրենսդրությունը թույլատրում է վերաբացման մերժում, եթե խախտման հետևանքները վերացվել են կամ անձի իրավունքների խախտման համար անձին համարժեք հատուցում է տրվել: Վերանայման վարույթի իրականացումը չի կարող մերժվել, եթե վերաբացման հանրային շահը գերակայում է անձի անհատական շահերին:

11. Սլովակիայի օրենսդրությունը դատական ակտի փոփոխման հնարավորության հարցը պայմանավորում է վերանայման համար հիմք հանդիսացող հանգամանքից և որդեգրել է տարբերակված մոտեցում: Եթե վերանայման հիմք է հանդիսացել, օրինակ, նոր ապացույցի ձեռք բերումը, դատարանը կարող է եզրակացնել, որ նոր հանգամանքը ազդեցություն չի ունեցել գործի ելքի վրա և վերանայվող դատական ակտի եզրափակիչ մասը կարող է մնալ անփոփոխ: Մինչդեռ, *Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի կամ սահմանադրական դատարանի կողմից որոշման կայացման դեպքում դատական ակտը ենթակա է փոփոխման*: Եթե վերանայվող դատական ակտը չի արտացոլում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կամ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, չի վերացնում արձանագրված խախտումը, ապա համարվում է, որ ներպետական դատարանը խախտում է թույլ տվել:

12. Բելգիայի օրենսդրությունը նոր հանգամանքով դատական վերանայման արդյունքում կայացվելիք դատական ակտի փոփոխության հնարավորության հարցը կանոնակարգելիս հետաքրքրական մոտեցում է որդեգրել: Օրենսդրությունը պարտադիր չի համարում վերանայման վարույթի արդյունքում գործի ելքի/լուծման փոփոխությունը, սակայն պարտադիր է համարում խախտման վերացումը և անձի իրավունքների վերականգնումը: Այնքանով, որքանով վերանայման վարույթի շրջանակներում անձի իրավունքների խախտումները և սահմանափակումները վերացվել են, դատարանի՝ գործի ելքի վերաբերյալ որոշման անփոփոխ լինելն ինքնին անթույլատրելի չի դիտարկվում:

13. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և դատարանի որոշումների կատարումն ապահովող Նախարարների կոմիտեն հստակ դիրքորոշում են արտահայտել առ այն, որ ***Եվրոպական դատարանի վճռի հիման վրա դատական գործի վերաբացումը դատական ակտի կատարումն ապահովող կարևորագույն միջոց է:*** Գործի առանձնահատկություններից ելնելով՝ այն հաճախ հանդես է գալիս որպես խախտված իրավունքների վերականգնման եզակի միջոց՝ առանց որի հնարավոր չէ ապահովել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը (restitutio in integrum): Գործերի արդյունավետ վերաբացման ապահովման նպատակով Նախարարների կոմիտեն ընդունել է Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման կամ վերաբացման վերաբերյալ անդամ պետություններին ուղղված թիվ R (2000) 2 հանձնարարականը, որի առնչությամբ առկա են պարզաբանող դրույթներ<sup>2</sup>: Հանձնարարականն ամրագրում է գործը և անձի իրավունքների խախտումը վերացնելու և նախկին դրությունը վերականգնելու պետության պարտականությունը:

### **Եզրակացությունը.**

Ամփոփելով սույն գրավոր մեկնաբանությունը, Կենտրոնն արձանագրում է, որ հակասահմանադրական նորմի կիրառությամբ արդարադատության

<sup>2</sup><https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=334147&Site=CM&BackColorInternet=C3C3C3&BackColorIntranet=EDB021&BackColorLogged=F5D383>

իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելը լուրջ սպառնալիք է իրավունքի գերակայության սկզբունքին: Հետևաբար, դատական ակտի վերանայման վարույթը՝ որպես անձի խախտված սահմանադրական իրավունքի վերականգնման միջոց, պետք է հանգեցնի իրավունքը խախտած դատական ակտի իրավաբանական ուժի վերացմանը:

Դատական ակտերի բացառիկ վերանայման ինստիտուտի նպատակն է ապահովել օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի առկայության պայմաններում խախտված իրավունքի վերականգնման գործառույթ: Հետևաբար, հակասահմանադրական ճանաչված նորմատիվ դրույթի կիրառման իրավաբանորեն հավաստված փաստի ուժով պետք է տեղի ունենա վերանայում, իսկ վերանայումը պետք է փաստի ուժով հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանմանը:

Կենտրոնը նաև արձանագրում է, որ դատարանները, վերանայման վարույթի կարգով գործը քննելիս, պետք է կաշկանդված լինեն նոր հանգամանքով, և սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներով:

Համակարգող՝

Արա Զոհրաբյան

քարտուղար՝

Իրինա Փիլոյան